ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

15 հունիսի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

80
(2930)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՎԱԳԱՆԻՆ ՆՈՒՅՆՊԵՍ ՀԱՆԳԱՏԻ Է ԳՆՈՒՄ

Երեւանի ավագանին նույնպես առաջիկայում «ամառային արձակուրդի» կմեկնի:

Ինչպես արդեն հայտնել ենք, հինգշաբթի օրը հայրենի խորհրդարանն ամառային նստաշրջանն ավարտեց. մինչեւ աշուն արտահերթ նիստերից բացի՝ ԱԺ հերթական նիստեր այլեւս չեն լինի:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հունիսի 25-ին հրավիրվելու է այս ավագանու վերջին նիստը, ու ավագանու անդամները եւս արձակուրդի կմեկնեն:

Ավագանու հերթական նիստն արդեն կկայանա սեպտեմբերին:

Ի տարբերություն պատգամավորների, որոնք ամռանը արտահերթ նիստեր են նախատեսում, Երեւանի ավագանու անդամները մտադիր են վայելել իրենց ամառային հանգիստը:

Մեզ հետ զրույցում Երեւանի ավագանու անդամներն ասացին, որ եթե արտառոց իրավիճակներ կամ հրատապ նախագծեր չլինեն, ապա տրամադրված չեն ամռանը արտահերթ նիստ հրավիրելու:

Այսինքն՝ հունիսի 25-ին ավագանին վերջին նիստը կանի եւ «կարձակվի»՝ մինչեւ սեպտեմբեր:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանի հեղինակած օրենքի համաձայն՝ որով առաջարկվում է 27 տարին լրացած ու պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներին ազատվել քրեական հետապնդումից՝ փոխարենը ծառայության անցնելով, եւ կամ ազատման համար համապատասխան վճար կատարելով, ունի հստակ սահմանված գումարի սահմանաչափ: Պատգամավոր Հայկ Սարգսյանի հեղինակած օրենքը հետախուզման մեջ գտնվող 27-37 տարեկան քաղաքացիներին հնարավորություն է տալիս ազատվելու քրեական հետապնդումից եւ անցնելու զինվորական ծառայության ստորեւ նշված եղանակներով. 1) 24 ամիս ժամկետով. 2) 12 ամիս ժամկետով եւ 2,5 մլն դրամ պետբյուջե վճարելով. 3) 6 ամիս ժամկետով եւ 5 մլն դրամ պետբյուջե վճարելով. 4) 1 ամիս ժամկետով եւ 10 մլն դրամ պետբյուջե վճարելով. 5) զինվորական ծառայության փոխարեն՝ 15 մլն դրամ պետբյուջե վճարելով: «Ժողովուրդ» օրաթերթը դիմել էր ՀՀ պաշտպանության նախարարություն՝ տեղեկանալու համար, թե 27 տարին լրացած քանի անձ է դիմել ՊՆ եւ վճարել համապատասխան գումարն ու կրճատել պարտադիր զինվորական ծառայության տարիները:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Արտակ Պողոսյանը հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ է նշանակվել 2023 թվականի փետրվարին: Նախկինում նա զբաղեցնում էր Երեւանի ոստիկանապետի պաշտոնը: Այդ պաշտոնում նշանակվել էր 2018 թվականի հունիսի 22-ին. իսկ ավելի վաղ Արտակ Պողոսյանը զբաղեցրել է ոստիկանության՝ Երեւան քաղաքի վարչության պետի օպերատիվ գծով տեղակալի պաշտոնը: Այժմ Արտակ Պողոսյանին վստահվել է ստուգել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի թոշակառու մորը պատկանող 230 հազար ԱՄՆ դոլար արժողությամբ բնակարանի գործը: Այսպիսով՝ նախկին ոստիկանապետ Արտակ Պողոսյանը, հակակոռուպցիոն կոմիտե գալուց մեկ ամիս անց, նոր բնակարան է ձեռք բերել Երեւան քաղաքում՝ բազմաբնակարան շենքում, 38 մլն 459 հազար դրամ արժողությամբ: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է գրեթե նույնքան, հենց այստեղից էլ հասկանում ենք, որ բնակարանը ձեռք է բերվել հիփոթեքով: Պողոսյանը 2021 թվականին ձեռք է բերել նոր մեքենա՝ 2020 թվականի արտադրության Lexus մակնիշի: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 10 հազար եվրո եւ 580 հազար դրամ: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 12 հազար եվրո:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեում ներքին կարգով քննարկվել է ՔՊ պատգամավոր Սերգեյ Բագրատյանի կնոջ ընկերության շուրջ առաջացած աղմկահարույց քրեական գործը կարճելու հարցը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ որպես այդ գործողության հիմք մտածել են գրել, որ պետությանը հասցված վնասը վերականգնվել է, էլ շարունակության կարիք չկա: Ինչպես բոլոր ՔՊ-ականների գործերը, այս դեպքն էլ ծանկադմփոց կարվի: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը, ստացած լուրերի համաձայն, գրել էր, որ նախաքննական մարմինը քննարկել էր, թե պետք է հարցաքննեն ՔՊ-ական պատգամավոր Սերգեյ Բագրատյանի կնոջը՝ Նաիրա Հակոբյանին, սակայն մինչ օրս նրան այդպես էլ չեն հարցաքննել: Նշենք, որ նոյեմբերի 28-ին հայտնի դարձավ՝ ոստիկանությունը բերման է ենթարկել ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանի կնոջ անունով գրանցված հանքարդյունահանմամբ զբաղվող ընկերության տնօրենին ու աշխատակիցներին: Իրավապահները ապօրինի գործող հանքի տարածքից նրանց տեղափոխել էին քննչական մարմին: Ավազի հանքի աշխատանքը դադարեցվել էր: Պատգամավորի կնոջ ընկերության կողմից ավազի ապօրինի արդյունահանման հետեւանքով՝ պետությանը խոշոր վնաս է պատճառվել: Այս մասին «Հետք»-ի հարցմանն ի պատասխան՝ հայտնել էին Գլխավոր դատախազությունից: Ըստ դատախազության՝ 2023 թ.-ի մարտի 13-ին Ռանչպար բնակավայրի վարչական տարածքում, առանց ընդերքօգտագործման իրավունքի, 6750 խորանարդ մետր ավազակոպճային լեռնային զանգված է տեղահանվել, որի հետեւանքով՝ 2.4 հեկտար հողաբուսական շերտ է վնասվել: Ապօրինի ձեռնարկատիրության, հողը փչացնելու, ընդերքի պահպանման եւ օգտագործման կանոնները խախտելու հատկանիշներով (երեք դրվագ) քրեական վարույթ է նախաձեռնվել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՉԵՆ ԳՈՐԾԵԼ», Ի. ԱԲԳԱՐՅԱՆ

«Տավուշը հանուն հայրենիքի» նախաձեռնությունը Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի գլխավորությամբ օրերս հանրահավաքներ, բողոքի ակցիաներ էին իրականացնում Բաղրամյան-Դեմիրճյան խաչմերուկներում, ինչի պատճառով էլ 96 ժամ այդ խաչմերուկները փակ են եղել:

Այդ հանրահավաքներից մեկի ժամանակ էլ ոստիկանների կողմից բիրտ ուժ ու լուսաձայնային նռնակներ են կիրառվել, ինչից տուժել են ոչ միայն հանրահավաքի մասնակիցները, այլեւ՝ ԶԼՄ շատ ներկայացուցիչներ:

Հիշեցնենք, որ երեկ երեկոյան Բաղրամյան-Դեմիրճյան խաչմերուկներում տեղի ունեցող հանրահավաքի ժամանակ Բագրատ սրբազանը հայտարարեց, որ խաչմերուկները բացվում են եւ որ մինչ երկուշաբթի սրբազանը հանդիպումներ է ունենալու տարբեր քաղաքական ուժերի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» կուսակցության անդամ Իզաբելլա Աբգարյանի հետ:

Մեզ հետ զրույցում Աբգարյանն ասաց, որ չի կարող ասել, թե ճիշտ էր կամ ճիշտ չէր սրբազան հոր այս հայտարարությունը, քանի որ դա կարող է իմանալ միայն այն մարդը, ով ղեկավարում է շարժումը:

-Ճի՞շտ էր արդյոք սրբազան հոր հայտարարությունը, արդյոք պետք չէ՞ր շարունակել այս ամենը, քանի որ շատերը նշում են, որ այս կերպ շարժումը հնարավոր է՝ մարի:

-Ես չեմ կարող ասել՝ ճիշտ էր, թե ճիշտ չէր, որովհետեւ դա կարող է իմանալ միայն այն մարդը, որը շարժումը ղեկավարում է: Մենք չգիտենք ինչ է տեղի ունեցել, ինչ ինֆորմացիա նա ունի, այսինքն միայն նա կիմանա, թե ինչու է ընդունել այդ որոշումը, ուրեմն այդպես է հարմար գտել:

-Երկու օր առաջ ոստիկանների կողմից հատուկ միջոց կիրառվեց՝ լուսաձայնային նռնակներ պայթեցվեցին, որոնցից առաջինը, կարծես թե հենց ԶԼՄ ներկայացուցիչների ուղղությամբ է նետվել: Ի՞նչ դիրքորոշում ունեք այս մասին, ինչի՞ համար էր այս ամենը:

-Նախ՝ գործել են ոչ պրոֆեսիոնալ, թույլ են տվել կոպիտ սխալներ, բացի այդ այն կադրերը որոնք ես էի նայում, առաջին անգամը չէ, ես տեսնում եմ ոչ թե պարզապես բողոքի ակցիան ցրել, հետ մղել փորձել, ես տեսնում եմ մարդկանցհետապնդել, փախչող մարդկանց հետապնդել եւ ծեծել: Այսինքն ոստիկանությունը մոռանում է, որ իր առաջ իր թշնամիները չեն եւ թաղի կռիվ չռն անում խուլիգանի, իհարկե պետք է այդպես չվարվեն եւ առանձին դրվագներում տեսնում ես, տպավորություն է, որ կարծես իր անձնական թշնամին լինի կանգնած: Նաեւ նռնակների մասով պետք է ասեմ՝ ակնհայտ էր, որ նռնակները կիրառվել են ոչ միայն որպեսզի հետ մղեն ԱԺ շենքից մարդկանց, այլ նաեւ փախչող մարդկանց ուղղությամբ էին գցում, այսինքն դրանք քայլեր են, որոնք ոչ պրոֆեսիոնալ են, փորձում են ավելի շատ ինքնահաստատվելու, մկան ցույց տալու, վախեցնելու մասին, այլ ոչ ԱԺ շենքի անվտանգությունը ապահովելը:

Լրագրողների հետ տեղի ունեցածը չի կարող անհետեւանք մնալ, դա պետության համար շատ մեծ գիծ է լինելու եւ լուրջ խնդիր մարդու իրավունքների համար, որովհետեւ պարտադիր պետք է հետաքննվեն, թե ինչպես են լրագրողները ստացել իրենց տրավմաները եւ պարտադիր պետք է փոխհատուցում լինի լրագրողների տուժած տեխնիկաների համար:

Ուզում եմ հավելել լրագրողների մասով, որ լրագրողների հետ տեղի ունեցածը չի կարող անհետեւանք մնալ, դա պետության համար շատ մեծ գիծ է լինելու եւ լուրջ խնդիր մարդու իրավունքների համար, որովհետեւ պարտադիր պետք է հետաքննվեն, թե ինչպես են լրագրողները ստացել իրենց տրավմաները եւ պարտադիր պետք է փոխհատուցվեն լրագրողների տեխնիկան: Ես տասնյակ տարիներ մասնակցել եմ բողոքի ցույցերին, այդ թվում նաեւ լարված իրավիճակներում եւ միշտ հիշում եմ, որպես ցուցարար, որ լրագրողները հետ էին քաշվում եւ իրենք էլ մեզ էին նայում տխուր աչքերով, հասկանալով, որ մեզ հետ գործողություն է տեղի ունենալու: Մենք հրաժարվում էինք գնալ, լրագրողները հետ էին քաշվում, այսինքն զգուշացվում էին: Նման բան այս անգամ տեղի չի ունեցել, սրա համար իսկապես քննություն է պետք եւ պարտադիր պատժվողներ պետք է լինեն:

-Շատերը նշում են, որ սա կարող էր դառնալ երկրորդ մարտի մեկ, ինչ կասեք այս մասին:

-Լուսաձայնային նռնակների պայթեցումից հետո, շատերը նշում էին, որ այս ամենը կարող էր դառնալ երկրորդ «մարտի մեկ», քանի որ տուժողները շատ էին, սակայն բարեբախտաբար զոհեր չունեցանք:

Մեկը մյուսի հետ չի համեմատի, քանի որ, ամեն դեպքում մարտի մեկի դեպքերը հետընտրական իրադարձություններ էին եւ հասարակ մի իրավիճակը մյուսի հետ համեմատելը ես սխալ եմ համարում:

Ես չէի համեմատի մարտի մեկի հետ, որովհետեւ ամեն դեպքում մարտի մեկը հետընտրական իրադարձություններ էին եւ հասարակ մի իրավիճակը մյուսի հետ համեմատելը ես սխալ եմ համարում: Կոնկրետ հիմա մենք ունենք լրիվ այլ պատկեր, ներքաղաքական պայքար չէ ավելի շուտ, կոնկրետ հարցը դրված է Հայաստանի անվտանգության, ապագայի, ոչ թե իշխանափոխության եւ իշխանության կռիվ է: Սա առաջին ամենակարեւոր առանձնահատկությունն է: Այն ինչ տեսանք այդ օրը, ես չեմ բացառում, որ ավելի հուժկու հավաքի եւ իշխանության համար վտանգի դեպքում կարող են կրակել»:

Զրուցեց ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԸ

ՀՐԱՏԱՊ ԴԻՄՈՒՄ

Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Ռուբեն Վարդանյանի միջազգային իրավաբանական թիմը հրատապ դիմում է ներկայացրել ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի հատուկ զեկուցող Էլիս Էդվարդսին, որտեղ շեշտել է Ադրբեջանի կառավարության կողմից խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի մասին:

Ռուբեն Վարդանյանի ընտանիքը եւ միջազգային փաստաբանը տեղեկացել են, որ 2024 թվականի ապրիլին հայտարարված հացադուլի ժամանակ Վարդանյանին տեղափոխել են պատժախուց, զրկել են խմելու ջրի հասանելիությունից, քնելու եւ արտաքին աշխարհի հետ կապի հնարավորությունից: Տեղեկություն չկա, թե որքան ուժեղ են եղել այդ ամենի արդյունքում նրան հասցված հոգեբանական եւ ֆիզիկական վնասները:

Տարածված հայտարարության վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոնի նախագահ Սիրանուշ Սահակյանի հետ՝ հասկանալու համար, ինչ մանրամասներ են իրեն հայտնի եւ ինչ է արվում.

«Այդ հայտարարությունը արդեն իսկ պարունակում է դրսեւորումների նկարագրություն, օրինակ այնտեղ հստակ շեշտադրվել է հացադուլի ընթացքում պատժիչ գործողություններ իրականացնելը, դրան զուգահեռ իրավունքների սահմանափակումը, մեկուսացումը արտաքին աշխարհից, ինչը ազդել է ընտանիքի անդամների հետ կապի վրա, միաժամանակ վատթարացել են պահման պայմանները եւ դրանք զուգակցվել են ջրի, սննդից, քնից զրկելով: Այս գործելակերպը նաեւ ադմինիստատիվ պրակտիկայի մաս է կազմում, մենք բազմիցս նման ահազանգեր եւ հիմնավորումներ լսել ենք հայրենադարձված գերիներից, որոնք նկարագրել են խոշտանգման եւ վատ վերաբերմունքը, ինչպես նաեւ այլ գործառույթներ, որտեղ դոմինանտ են եղել ֆիզիկական բռնությունը»:

Սիրանուշ Սահակյանի կարծիքով՝ այս խնդիրը վերաբերվում է ոչ միայն Ռուբեն Վարդանյանին, այլ նաեւ այնտեղ պահվող մյուս հայերին, նրանք իրենց ընտանիքների հետ զրուցելիս ակնհայտորեն եղել են ճնշված վիճակում եւ տարաբնույթ մտքեր են հայտնել:

«Ռուբեն Վարդանյանի պարագայում հրատապ դիմում է ներկայացվել խոշտանգումների հարցերով զբաղվող հատուկ զեկուցողի, ինչը պաշտպանության մեխանիզմ է եւ գործում է միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո»:

Հարցին, թե արդյոք արձագանք կա միջազգային կազմակերպություններից, թե ոչ, ասաց. «Մենք շատ ակտիվ ներգրավածություն ենք ունեցել Միավորված ազգերի կազմակերպության խոշտանգումների դեմ կոմիտեի քննարկումների շրջանակում եւ 2024 թվականի մայիսին նրանք հրապարակել են կոմիտեի զեկույցը, որտեղ շատ խիստ գնահատականներ են ներկայացված եւ այնտեղ հատուկ բաժին կա, որը նվիրված է հենց հայերի առնչությամբ խոշտանգումների կիրառման պրակտիկային, դրա անթույլատրությանը:

Այստեղ իրավական գործընթացները իրենց պատշաճ հունով ընթանում են, եւ կարծում եմ պետության իրավական թիմը կկարողանա հասնել ճշգրիտ գնահատականների, սակայն այս գնահատականների համար պետք է օգտագործել ճնշում»:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԹԱԹՈՅԱՆԻ ԱՐՇԱԳԱՆՔԸ՝ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Երեկվանից սկսած՝ հանուն քաղաքական շահերի, իշխանությունը սաստկացրել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ ամթոալի արշավը: Ակնհայտ է, որ այն ընթանում է քաղաքական իշխանության բարձրագույն կազմի հրահանգով ու համակարմամբ:

Երեկվա տեղի ունեցածը պատրվակ օգտագործելով՝ փորձ է արվում պատասխանատվությունը կեղծիքներով ու վիրավորանքներով վերագրել Գարեգին Երկրորդ Կաթողիկոսին եւ մյուս հոգեւորականներին ու Մայր Աթոռին առհասարակ: Մայր Աթոռն Սուրբ Էջմիածնի [այդ թվում՝ այսօրվա] բազմաթիվ հայտարարություններով է հերքվում, որ իշխանության այս քարոզն իրականության հետ կապ չունի:

Այն, որ Մայր Աթոռի վարկաբեկման համար իշխանությունն իր համար «պատեհ» առիթներ է փնտրում, ապացուցվում է Սարդարապատում Վեհափառ Հայրապետի մուտքի խոչընդոտների ու հոգեւորականների նկատմամբ բռնության, եկեղեցականների նկատմամբ անհանդուրժողականության խոսքի, քաղաքական որոշման հարկելու ու այլ ձեւերով հետապնդման սպառնալիքների եւ այլ դեպքերով:

Նման դատապարտելի պահվածքը պառակտում է մեր հասարակությունը, Սփյուռքը, հրահրում է ներքին թշնամանք ու թուլացնում պետականությունը, որը հարիր չէ առհասարակ որեւէ իշխանության:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ունի ազգային եկեղեցու կարգավիճակ ու սահմանադրական ամրագրում: Այն մշտապես մեծագույն դեր է ունեցել մեր պատմության, ինքնության, պետականության եւ համերաշխության ապահովման հարցում:

«ԼԵԶՎԱԿՌԻՎՆԵՐՈՎ ՈՒ ՔԱՇՔՇՈՒԿՈՎ» ԱՎԱՐՏՎԵՑ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Խորհրդարանը երեկ ավարտեց այս նստաշրջանի իր աշխատանքը: Պատգամավորները արձակուրդ կգնան:

Նիկոլ Փաշինյանի եւ նախարարների մասնակցությամբ տեղի ունեցած նիստին ԱԺ-ն հաստատեց 2023թ-ի պետբյուջեի կատարողականը եւ Վճռաբեկ դատարանի դատավոր ընտրեց:

ԱԺ այս նստաշրջանի վերջին նիստերում նաեւ վիճաբանությունների պակաս չկար:

Պարբերաբար լեզվակռիվ, ինչպես նաեւ քաշքշոց էր տեղի ունենում ընդդիմադիրների եւ ՔՊ-ական պատգամավորների միջեւ:

ԱԺ հաջորդ նստաշրջանը կմեկնարկի արդեն աշնանը՝ սեպտեմբերից, մինչ այդ, սակայն, արտահերթ նիստեր կլինեն:

Հիշեցնենք, որ երկուշաբթի օրը՝ հունիսի 17-ին ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցություններն են արտահերթ նիստ հրավիրել՝ կառավարության հրաժարականի հարցով, որին ՔՊ-ն չի մասնակցելու:

«ԼՈՒԼՈՒՆ» ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ Է ՏԱԼԻՍ

ՔՊ-ական պատգամավոր Լուսինե Բաղալյանը, նույն ինքը՝ Լուլուն, բարոյական դասեր է տալիս ընդդիմադիրներին՝ թե ատելության խոսք են տարածում եւ ուշ ժամի ակցիաներ են իրականացնում՝ խանգարելով քաղաքացիների անդորրը:

Նա օրեր առաջ ընդդիմության հանրահավաքից հետո գրել էր. «Խնդրում եմ փոխանցեք Գալստանյանին, որ ժամը 00:25 րոպե այն տարածքում, որտեղ բղավում են , իրենց իսկ հայրենակիցների երեխաներն են քնած , հիվանդ մարդիկ կան , անքնությամբ տառապող տարեց մարդիկ, ու անվերջ կարելի է թվարկել, թե ում անդորրն են խանգարում, ինչն անթույլատրելի է: Այն, որ խախտում են օրենքներ, արդեն սովորել ենք, բայց վերը նշածս մարդիկ, որոնք անդադար բողոքում են, մեղավոր չեն, որ դուք ամեն ինչ անում եք, որ բերման ենթարկվեք, մի կերպ ճողոպրեք ձեր իսկ ստեղծած ծուղակից»:

Թերեւս կարիք կա թարմացնելու նրա հիշողությունը:

Ուշագրավ է, որ հանդուրժողականության վերաբերյալ խրատներ է տալիս մի ուժի ներկայացուցիչ, որն իշխանության է եկել դագաղներով, սեւ լենտերով, ընդդիմադիրների ընտանիքներին թիրախավորելով, նրանց տուն ծաղկեպսակներ տանելով:

Հետաքրքիր է՝ նույն Լուսինե Բաղալյանը 2018-ին չէ՞ր մտահոգվում քաղաքացիների մասին, երբ իրենց թիմակիցները կաթսաներով ու շերեփներով, սուլոցներով գիշերով աղմուկ էին բարձրացնում:

Եւս մեկ անգամ փաստենք՝ այն ինչ կարելի է եւ բարոյական է ՔՊ-ականներին եւ նրանց կողմնակիցներին, մյուսների համար անթույլատրելի է եւ ոչ բարոյական:

ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵԼ Է ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը եւ Հռոմի Պապ Ֆրանցիսկոս Առաջինը չորեքշաբթի օրը՝ հունիսի 12-ին, Հռոմի Սուրբ Աթոռում կայացած հանդիպմանը քննարկել են բռնի տեղահանված հայ բնակչության՝ ԼՂ վերադարձի եւ ադրբեջանական գերությունից հայ բանտարկյալների ազատման հարցը: Այդ մասին հայտնել է Կիլիկիո կաթողիկոսությունը:

Նրանք խոսել են նաեւ Վատիկանի Երրորդ ժողով հրավիրելու հրամայականի մասին՝ ոչ կաթոլիկ եկեղեցիների ակտիվ մասնակցությամբ: Օրակարգում է եղել նաեւ միջեկեղեցական հարաբերություններն ավելի խթանելու անհրաժեշտությունը:

Արամ Առաջինը հրավիրվել էր Հռոմ՝ դասախոսություն կարդալու կրոնի եւ աշխարհաքաղաքականության եւ Մերձավոր Արեւելքում նրանց փոխձեւավորման մասին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՂ ԿՈՉ

Նիկոլ Փաշինյանը եւ նրան սպասարկող խորհրդարանական մեծամասնությունը կորցրել են քաղաքական լեգիտիմությունը եւ պետք է անհապաղ հրաժարական տան: Նրանց հետագա գործունեությունը միայն խորացնում է քաղաքացիական դիմակայությունը երկրի ներսում եւ վարկաբեկում Հայաստանի հեղինակությունն ու ճանաչումը միջազգային հարաբերություններում:

Նիկոլ Փաշինյանը եւ նրա քաղաքական թիմը կրում են քաղաքական, բարոյական եւ քրեաիրավական անմիջական պատասխանատվություն վերջին օրերի իրադարձությունների համար՝ ըստ էության վերածվելով հակաժողովրդական եւ ապազգային քաղաքական տարրերի, որոնք սպասարկում են արտաքին ուժերի, առաջին հերթին՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի շահերը:

Ակնհայտ է, որ մեր ժողովրդի պատմության վերջին շրջանի բոլոր ողբերգական իրադարձություններն ուղղակիորեն առնչվում են Նիկոլ Փաշինյանի եւ նրա մերձավոր շրջապատի գործունեության հետ (2008թ. մարտի 1, 2018թ. իշխանության զավթում, 44-օրյա պատերազմ, Ադրբեջանի կողմից Հայաստանի ինքնիշխան տարածքի օկուպացիա, Լեռնային Ղարաբաղի կորուստ): Եկել է ժամանակը դադարեցնել այս ընթացքը եւ շարունակել մեր արժանապատիվ ընթացքը առանց Նիկոլի ու նրա մեծամասնության: Սա արդեն մեր ժողովրդի համար դարձել է գոյաբանական անհրաժեշտություն:

Փաստերը վկայում են, որ անցած վեց տարիներին երկրում ձեւավորվել է Նիկոլ Փաշինյանի միանձնյա կառավարման ռեժիմ: Այն որեւէ կապ չունի Սահմանադրության հիմնարար նորմերի, մարդու իրավունքների եւ ժողովրդավարության հետ: Իրենց մեծամասնություն անվանող մարդկանց մի փոքր խումբ, պատերազմի նոր սպառնալիքներով շանտաժի ենթարկելով հասարակությանը, պատանդ է պահում հայկական պետությունը՝ հանուն սեփական անվտանգության եւ հարստացման:

Ռեժիմի առաջնորդ Նիկոլ Փաշինյանի խոստովանությունները վկայում են, որ վերջին վեց տարիներին նա շահարկում է հասարակական կարծիքը, մոլորության մեջ գցում բնակչությունը, ծառայում է այլ շահերի, ամրապնդում իր ընտանիքի եւ մերձավորների նյութական բարեկեցությունը:

Կառավարման վեց տարիներին նա ավելացրել է երկրի պետական պարտքը վեց միլիարդ դոլարով, աճել է կոռուպցիան, ոչնչացվել է պետության ողջ պաշտպանական համակարգը: Իշխողների քաղաքականությունն ու գործողությունները հակասում են Հայաստանի Սահմանադրությանը եւ սպառնում են սահմանադրական կարգին:

Իշխանությունների ագրեսիվությունը, խաղաղ ցուցարարների նկատմամբ բռնի ուժի կիրառումը, Ազգային ժողովը ռազմականացված օբյեկտի վերածելը հոգեվարքի

եւ իրենց կատարած հանցագործությունների համար անձնական քրեական պատասխանատվության պահը հնարավորինս հետաձգելու ցանկության դրսեւորում է:

Այսօր Հայաստանը վերածվել է ոստիկանական պետության, որտեղ իրավապահ մարմինները ոչ թե հասարակական կարգը պահպանելու եւ մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները հարգելու գործառույթ են իրականացնում, այլ միայն պաշտպանում են ռեժիմի առաջնորդին եւ նրա մերձավոր շրջապատին: Այն, որ ոստիկանությունը չի ծառայում հասարակությանը, վկայում է տարեցտարի երկրում ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների թվի աճը: Դատական եւ իրավական համակարգը դարձել է քաղաքական ռեժիմի կցորդը եւ ամբողջությամբ կորցրել է իր անկախությունն ու օբյեկտիվությունը:

2024 թվականի հունիսի 12-ին Բաղրամյան պողոտայում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ մարդու իրավունքների պաշտպանը, Բարձրագույն դատական խորհրդի նախագահը եւ գլխավոր դատախազը պետք է անհապաղ հրաժարական տան՝ որպես սահմանադրական մարմինների ներկայացուցիչներ, որոնք չեն կարողացել կանխել մարդու իրավունքների զանգվածային խախտումները, չեն ապահովել օրենքի գերակայություն:

Հունիսի 12-ի Բաղրամյան պողոտայի դեպքերը այն կարմիր գիծն էին, որ գործող իշխանություններին դրեց օրենքից դուրս: Մենք գտնում ենք, որ բոլոր ապօրինի գործողություն իրականացնող ոստիկանները, քննիչները, դատախազներն ու դատավորները անձնական պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների եւ որոշումների համար: Նրանք դիտվելու են որպես Փաշինյանի հակաժողովրդական եւ հակապետական ռեժիմին աջակցողներ, խաղաղ ցուցարարների նկատմամբ իշխանությունների վայրագ, հակաօրինական գործողությունները արդարացնող:

Բոլոր քաղաքական ուժերին եւ հասարակական կազմակերպություններին, որոնք իրենց համարում են ժամանակակից հայ հանրության մաս եւ պատրաստ են պայքարել ազատության ու արդարության համար, պետք է իրենց հստակ վերաբերմունքը արտահայտեն հունիսի 12-ի իրադարձությունների կապակցությամբ: Հակառակ դեպքում, մենք գտնում ենք, որ նրանք հավասարապես պատասխանատվություն են կրում Փաշինյանի վարչակարգի քաղաքականության համար, համերաշխ են նրա հետ եւ իրենց գործողություններով ամրապնդում են այն:

Կոչ ենք անում

1. Միջազգային հանրությանը՝ դատապարտել իշխանությունների գործողությունները: Հակառակ դեպքում՝ ակնհայտ կլինեն երկակի ստանդարտները առ այն, որ մարդու իրավունքների, ժողովրդավարության եւ օրենքի գերակայության հարցերում միջազգային հանրության հետ համագործակցության օրակարգը սպառել է իրեն եւ կրում է բացառապես աշխարհաքաղաքական նպատակահարմարության բնույթ՝ սպասարկելով Փաշինյանի ռեժիմի շահերը:

Կոչ ենք անում ԵԽԽՎ-ին հունիսյան նստաշրջանի օրակարգից հանել Հայաստանի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման հարցը, քանի որ նախապատրաստված նյութերն օբյեկտիվ չեն, չեն արտացոլում մարդու իրավունքների եւ ժողովրդավարության որակի իրական վիճակը երկրում եւ էապես խրախուսում են Նիկոլ Փաշինյանի ավտորիտար ռեժիմի ամրապնդումը: Եվրախորհրդի հետագա կողմնակալ վերաբերմունքը Հայաստանում մարդու իրավունքների, ժողովրդավարության եւ օրենքի գերակայության իրական վիճակին, ընդդիմության եւ քաղաքացիական հասարակության կարծիքների անտեսումը կվարկաբեկի այս կազմակերպության հեղինակությունն ու նշանակությունը:

2. Հաշվի առնելով, որ գործող իշխանությունների օրոք անհնար է հասնել իրավապահ մարմինների ղեկավարների գործունեության օբյեկտիվ եւ արդարացի իրավական գնահատականի (ներքին գործերի նախարար, ոստիկանապետ, ԱԱԾ տնօրեն, քննչական կոմիտեների ղեկավարներ), առաջարկում ենք նրանց ինքնակամ հրաժարական տալ:

Այս կոչին չհետեւելը հետագայում դիտվելու է որպես ձեր գործողությունները ծանրացնող հանգամանք, քանի որ պաշտոնավարման շարունակությունը ընկալվելու է որպես ապօրինի եւ հակաօրինական գործողությունները շարունակելու գիտակցված ցանկություն:

3. ՀՀ արժանապատիվ քաղաքացիներին՝ աջակել Սրբազան շարժմանը, կանգնել այն մարդկանց կողքին, ովքեր ցանկանում են սրանց հեռացմամբ թեւակոխել կայուն խաղաղության եւ ամուր պետության ժամանակաշրջան:

ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցություն
ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցություն
13 հունիսի, 2024թ.

ՉԵՆ ԼՌԵՑՆԻ

ՀՅԴ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՆ ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿԵԼ

Իշխանությունները գործադրության մեջ են դրել հանրությանը վախի, ահաբեկման եւ բռնաճնշումների ողջ արսենալը: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լիլիթ Գալստյանը:

«Այսօր առավոտից (խմբ) խուզարկություններ են կատարվում Դաշնակցության Վայքի եւ Եղեգնաձորի գրասենյակներում: Բերման են ենթարկվել Վայոց Ձորի կառույցի ղեկավար մարմնի անդամներ:

Խուճապի մեջ հայտնված ռեժիմը սեփական իշխանությունը պահելու համար, կանգ չի առնում ոչնչի առջեւ:

Կատարվածը Կուսակցությունների մասին սահմանադրական օրենքի կոպիտ խախտում է: Սա ակնհայտորեն քաղաքական ուժի՝ Դաշնակցության նկատմամբ կազմակերպված եւ ուղղորդվող եւ թիրախավորված հարձակում է, մեր գործունեությունը խոչընդոտելու ծրագիր:

Հայրենիքի ու պետականության համար պայքարող քաղաքական ուժին, գաղափարական մարդուն բռնաճնշումներով ու հալածանքներով չեք լռեցնի: Չե՛ք հաջողելու», - գրել է նա:

ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ. ՔՐԳՈՐԾ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ սպանության օրը՝ հունսի 11-ին՝ ժամը 11-ին «ֆազը» գնացել է Ավանի դատարան: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նրա պաշտպանը միջնորդություն է ներկայացրել , որ դատավոր Մանվել Շահվերդյանը թույլ տա Սերգեյ Գրիգորյանին՝ «ֆազին», առողջական խնդիրներով պայմանավորված, դուրս գա երկրից: Դատավոր Մանվել Շահվերդյանը բավարարել է միջնորդություն ու թույլ է տվել «ֆազին» լքել երկիրը: Ասել է թե՝ նրա «սեկտը» բացել են: Դատարանից Սերգեյ Գրիգորյանը ուրախ դուրս է եկել ու հայտնել, որ կգնա առողջական խնդիրներով երկրից ու մի ֆիչ էլ կօդափոխվի ու կգա Հայաստան:

Վերջինիս մտերիմները այդ օրը որեւէ արտառոց բան չեն նկատել իրենց շուրջ ու դեռ ավելին՝ անգամ Սերգեյ Գրիգորյանը՝ «ֆազը», ըստ մտերիմների, բավականին ուրախ է եղել այդ օրը:

Իսկ ինչ քրեական գործով է անցել նա, որ ներկայացել է սպանության օրը դատարան:

Սերգեյ Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա Մարիա Ավետիսյանի սոցիալական էջին Արթուր Ալեքսանյանի սոցիալական էջից, իր եւ Մարիա Ավետիսյանի հասցեին վիրավորական գրառումներ կատարելու համար, Արթուր Ալեքսանյանին պատժելու նպատակով, առեւանգելու ուղղակի դիտավորությամբ, նախապես համաձայնության է եկել Բագրատ Արաբշյանի, Ավետիք Մանուկյանի եւ դեռեւս չպարզված մի խումբ անձանց հետ, որից հետո Ավետիք Մանուկյանը Արթուր Ալեքսանյանի հետ ունեցած մտերիմ փոխհարաբերությունների հիման վրա ձեւավորված վստահությունը չարաշահելու միջոցով, խաբեությամբ, իրականությունը դիտավորությամբ խեղաթյուրելով՝ Արթուր Ալեքսանյանի կողմից իր մարմնի վրա դաջվածք կատարելու պատրվակով, 2020 թվականի դեկտեմբերի 11-ին՝ ժամը 21:09-ին, հեռախոսազանգի միջոցով վերջինիս հրավիրել է Երեւան քաղաքի Ջանիբեկյան 25 հասցեում գտնվող իր տանը կից աշխատասրահ, որից հետո՝ ժամը 23:00-ի սահմաններում, Արթուր Ալեքսանյանը այցելել է Ավետիք Մանուկյանի հիշյալ հասցեում գտնվող աշխատասրահ, որտեղ արդեն իսկ նախապես պայմանավորվածության համաձայն Սերգեյ Գրիգորյանը, Բագրատ Արաբշյանի եւ դեռեւս չպարզված մի խումբ անձանց հետ շուրջ 1 ժամ Արթուր Ալեքսանյանի կամքին հակառակ՝ ապօրինի ազատությունից զրկելով, հարվածներ են հասցրել վերջինիս մարմնի տարբեր մասերին՝ պահանջելով հայտնել նրա /ինստագրամյան/ էջից վիրավորական գրառումներ կատարած անձի տվյալները, սակայն ստանալով բացասական պատասխան, շարունակել են հանցավոր գործողությունները եւ որպես զենք օգտագործվող առարկայով՝ դանակով բռնություն գործադրելու սպառնալիքով՝դանակը բացված վիճակում Արթուր Ալեքսանյանի գլխին պահած նստեցրել են գործով չպարզված սեւ գույնի «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենա եւ նրա կամքին հակառակ տեղափոխել են Երեւան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի տարածքում գտնվող, դեռեւս չպարզված շինություն, որտեղ շուրջ մեկ եւ կես ժամ վերջինիս կամքին հակառակ շարունակել են ապօրինի զրկել ազատությունից եւ հարվածներ հասցնել վերջինիս մարմնի տարբեր մասերին՝ նույն պահանջով: Այնուհետեւ, ժամը 01:25-ի սահմաններում, Արթուր Ալեքսանյանի մտերիմ Ռուստամ Ստեփանյանի միջամտությամբ Արթուր Ալեքսանյանը ազատ է արձակվել՝ հետագայում վիրավորական գրառումներ կատարած անձի տվյալները հայտնելու պայմանով:

Armlur.am-ը գրել էր, որ Սերգեյ Գրիգորյանին սպանել են հունիսի 11-ի գիշերը, սպանությունը դեռ բացահայտված չէ : երեկվա դրությամբ, ըստ նախնական վարկածի, Սերգեյ Գրիգորյանին կյանքից զրկել են վարձու մարդասպաններ, որոնք եղել են երկու հոգի: Նրանք գտնվել են OPEL մակնիշի ավտոմեքենայի մեջ, որը, ինչպես արդեն նշել էինք, գողացված է եղել: Ի դեպ «ֆազի» հետ նրա հետ մեքենայում այդ օրը եւս մեկ քաղաքացի է եղել, որը հիվանդանոց էր տեղափոխել եւ արդեն դուրս էգրվել հիվանդանոցիվ:

Հավելենք, որ «ֆազի» սպանության գործով այս պահին բազմաթիվ վարկածներ են քննվում, այդ թվում՝ «Չաղ Ռուստամի» հետ նրա հարաբերությունները»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՈՒՐԵՐ

ՏԱՆԻՔԻՑ ԻՋՆԵԼՈՒ ՊԱՀԻՆ ԳՈՂԸ ԸՆԿԵԼ Է ՊԱՏՇԳԱՄԲ

Հունիսի 12-ին, կեսգիշերն անց, 9-11 ծառայություն զանգահարած շտապօգնության բժիշկը հայտնել է, որ Կոմիտասի շուկայի մոտ շենքի տանիքից մի քաղաքացի ընկել է 3-րդ հարկի պատշգամբ, սակայն այդ տան բնակիչները դուռը չեն բացում:

Այս մասին հայտնել են ոստիկանությունից:

Այլ կերպ ասած՝ մարդուն հարկավոր է եղել ցույց տալ բժշկական օգնություն, սակայն դուռը փակ է եղել: Հաղորդումը փոխանցվել է նաեւ ոստիկանության Արաբկիրի բաժին, որտեղից դեպքի վայր է մեկնել օպերատիվ խումբ:

Բացատրական աշխատանքի արդյունքում փակ տան բնակիչը տվել է հաղորդում: Գիշերվա ժամը 1-ին նրան էր զանգահարել մի քաղաքացի եւ հայտնել, որ իր տան պատշգամբ վերեւից մարդ է ընկել:

Պարզվել է, որ այդ մարդը շենքի տանիքից ցանկացել է պարանով իջնել ու գաղտնի մուտք գործել նշված բնակարան, սակայն իր կամքից անկախ՝ հանցագործությունն ավարտին չի հասցրել:

Իրավապահները պարզել են պարանից ընկածի ինքնությունը: Քրեակատարողական հիմարկում հաշվառված 51-ամյա տղամարդը ժամը 1.50-ին տեղափոխվել է 1-ին համալսարանական հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունք:

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ «ԻԶՄԻՐԼՅԱՆԻ...» ՄԱՆԿԱՏԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Լիլիթ Սուքիասի Հակոբյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա հանդիսանալով ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առեւտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար, ապա տնօրեն, հանդիսանալով պաշտոնատար անձ եւ ի պաշտոնն լիազորված լինելով տնօրինել կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, ինչպես նաեւ պատասխանատվություն կրելով հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար, իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ դրսեւորել է անփույթ վերաբերմունք, մասնավորապես՝ առանց ստուգելու հաստատել է կազմակերպության հաշվապահի կողմից կազմված եւ իրականությանը չհամապատասխանող՝ կազմակերպության 2018 թվականի մայիսից սեպտեմբեր ամիսն ներառյալ ժամանակահատվածի, ինչպես նաեւ 2019 թվականի դեկտեմբեր ամսի ֆինանսական հաշվետվությունները, որի հետեւանքով անզգուշությամբ էական վնաս է պատճառել կազմակերպության եւ պետության օրինական շահերին՝ այն է պետությանը պատճառվել է 3.256.390 ՀՀ դրամի, իսկ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը 2.695.000 ՀՀ դրամի գույքին վնաս:

ԼՈՒՐԵՐ

ՀԴՄ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ

Պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ 2024 թվականի մայիս ամսվա ընթացքում արձանագրվել են հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտման 154 դեպք եւ 72.82 մլն դրամի չափով տուգանք:

Արձանագրված խախտումներից 11 դեպքով 11 հարկ վճարողի մոտ արձանագրվել է 1.0 մլն դրամ եւ ավելի տուգանք՝ ընդհանուր շուրջ 34.19 մլն դրամի չափով:

Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտման դեպքերով 1.0 մլն դրամ եւ ավելի տուգանք արձանագրվել է փաստացի գործունեության հետեւյալ ոլորտներում.

- ավտոտեխսպասարկում եւ (կամ) ավտոլվացման, հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի, ավտոպահեստամասերի առեւտրի ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 5.5 մլն դրամ տուգանք,
- ավտոգազալցակայանում 2 հարկ վճարողի մոտ 2 դեպքով արձանագրվել է 2?84 մլն դրամ տուգանք,
- ծխախոտի առեւտրի ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 10 մլն դրամ տուգանք,
- կահույքի արտադրության ոլորտում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 1.5 մլն դրամ տուգանք,
- կացության կազմակերպման, հագուստի, կոշիկի եւ գործվածքների առեւտրի, կրթության ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 1.16 մլն դրամ տուգանք,
- հեղուկ եւ կոշտ վառելիքի առեւտրի, ավտոգազալցակայանի ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է 3.43 մլն դրամ տուգանք,
- մթերային խանութում 2 հարկ վճարողի մոտ 2 դեպքով արձանագրվել է շուրջ 2.4 մլն դրամ տուգանք,
- մթերային խանութի, առեւտրի իրականացման վայրի կազմակերպման ոլորտներում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 4.5 մլն դրամ տուգանք,
- տնտեսական ապրանքների խանութում 1 հարկ վճարողի մոտ 1 դեպքով արձանագրվել է շուրջ 2.86 մլն դրամ տուգանք:

ՀԴՄ կիրառման կանոնների խախտում թույլ տված եւ 1.0 մլն դրամ եւ ավելի գումարով տուգանված 11 հարկ վճարողների անվանական ցանկը՝ ըստ գործունեության ոլորտների, կցվում է (ՀԴՄ-Ցանկ 1):

ՀԴՄ կիրառման կանոնների խախտում թույլ տված 154 հարկ վճարողների ցանկը կցվում է (ՀԴՄ-Ցանկ 2):

ՄԵՂՐՈՒ ԱՆՑԱԿԵՏՈՒՄ ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Ոստիկանության Մեղրիի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հունիսի 12-ին՝ ժամը 4-ին, Մեղրիի սահմանային անցակետում հայտնաբերվել եւ բաժին է տեղափոխվել Ռուդոլֆ Դ.-ն:

Տղամարդուն 2013 թ. մայիսի 16-ից ոստիկանության Արաբկիրի բաժինը հետախուզում էր ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի (խարդախությունը) 3-րդ մասի մեղադրանքով:

Խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հունիսի 13-ից 14-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 87 դեպք, որից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԷԺԱՆ ԳՆՈՎ ՀՈՂ Է ՕՏԱՐԵԼ

Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը տեղեկացնում է, որ Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի 2024թ. մայիսի 2-ի թիվ 538-Ա որոշմամբ 2024թ. հունիսի 3-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 473.5քմ հողամաս (Լոտ-36 (ՔՀ-24)), Դիլիջան քաղաքի, Մ. Գորկու փողոց, թիվ 9/3 հասցեում, հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով, 5208500 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 5208500 դրամ առավելագույն գնով հաղթել է «Գրիին Ռոք Մենեջմենթ Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (գտնվելու վայրի հասցեն՝ քաղաք Երեւան, Ե. Կողբացու փողոց, թիվ 36/3, տնօրեն՝ Վարազդատ Ներսիսյան), որի մասին Դիլիջան համայնքի հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 6 արձանագրությունը: Հունիսի 6-ին համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը որոշել է հաստատել այդ հանձնաժողովի թիվ 6 արձանագրությունը եւ նշված հողամասը հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով օտարել «Գրիին Ռոք Մենեջմենթ Գրուպ» ՍՊԸ-ին: Նշենք, որ աճուրդում հողամասի մեկնարկային եւ առավելագույն գինը նույնն է եղել՝ 5208500 դրամ: Դիլիջանի Մ. Գորկու փողոցում 473 քմ մակերեսով հողամասի շուկայական գինը մի քանի անգամ գերազանցում է 5 միլիոն 200 հազար դրամը: Մտեք list.am եւ «Դիլիջանցիք» կայքեր, եւ կտեսնենք, թե Դիլիջան քաղաքում որքան բարձր են հասարակական նշանակության օբյեկտների կառուցման համար նախատեսված հողերի շուկայական գները: Հավելենք, որ «Գրիին Ռոք Մենեջմենթ Գրուպ» ՍՊԸ-ի ինտերնետային էջում որպես այդ ընկերության հիմնադիր նշված է Դիլիջանում ծնված, Շվեյցարիայում ապրող Մարետա Գեւորկյանը, ով «Էվոկաբանկի» 100 տոկոս բաժնետոմսերի սեփականատերն է, ՀՀ քաղաքացի է, Շվեյցարիայի ռեզիդենտ:

ԱՐՑԱԽՆ ՈՒՐԱՑԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆեյսբուքյան էջը հայտնում է. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցները այցելել են Նոյեմբերյան համայնք, հանդիպել ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքներին եւ իրազեկել Կառավարության՝ ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի մասին»: Հայաստանի կառավարության գործունեության հետեւանքով է Արցախը հայաթափվել, արցախցիները հայրենազուրկ, տնազուրկ են դարձել, Արցախն ուրացած, այն Լեռնային Ղարաբաղ կոչող, այն Ադրբեջանի մաս համարող կառավարության մասին գրելիս ինչո՞ւ եք այն մեծատառով գրում, հայրենիք ուրանալը հարգարժա՞ն գործ է :

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ

ԴԻՄՈՒՄ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԹԻՄԻ ԿՈՂՄԻՑ

ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի հատուկ զեկուցող Էլիս Էդվարդսին ներկայացրած դիմում-բողոքում Ջարեդ Գենսերը եւ նրա թիմը շեշտել են Ադրբեջանի կառավարության կողմից խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի մասին:

Ադրբեջանում կալանավորված քաղբանտարկյալ Ռուբեն Վարդանյանի միջազգային փաստաբանական թիմը հունիսի 13-ին հրատապ դիմում է ներկայացրել ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի հատուկ զեկուցողին՝ հորդորելով դատապարտել Ադրբեջանի կառավարության կողմից Ռուբեն Վարդանյանի դեմ իրականացվող խոշտանգումներն ու դաժան վերաբերմունքը:

Չափազանց մեծ մտահոգություն է հարուցում այն, որ Ռուբեն Վարդանյանի ընտանիքը եւ միջազգային փաստաբանը տեղեկացել են, որ 2024 թվականի ապրիլին հայտարարված հացադուլի ժամանակ Վարդանյանին տեղափոխել են պատժախուց, զրկել են խմելու ջրի հասանելիությունից, քնելու եւ արտաքին աշխարհի հետ կապի հնարավորությունից: Տեղեկություն չկա, թե որքան ուժեղ են եղել այդ ամենի արդյունքում նրան հասցված հոգեբանական եւ ֆիզիկական վնասները:

«Ռուբեն Վարդանյանը հայտնի մարդասեր եւ բարերար է, որը երկար տարիներ շարունակ պաշտպանում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքները: Հատկանշական է, որ Ադրբեջանը նրան դիտարկում է որպես սպառնալիք, նրան փորձում են լռեցնել կամայական կալանքի միջոցով, իսկ վերջին շրջանում էլ՝ խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի միջոցով: Եթե Ադրբեջանը ցանկանում է, որ իրեն լուրջ վերաբերվեն միջազգային հարթակում, եւ որ COP29-ը դառնա «Խաղաղության COP», ապա պետք է դադարեցնի Վարդանյանի նկատմամբ դաժան վերաբերմունքը եւ անհապաղ կերպով ազատ արձակի նրան եւ Լեռնային Ղարաբաղի մյուս քաղբանտարկյալներին», -ասել է Վարդանյան ընտանիքի միջազգային իրավախորհրդատու Ջարեդ Գենսերը:

2024 թվականի ապրիլի 5-25-ը Ռուբեն Վարդանյանը հացադուլ էր հայտարարել՝ի նշան բողոքի իր եւ մյուս հայ բանտարկյալների քաղաքական դրդապատճառներով հետապնդումների դեմ: Ի պատասխան՝ Ադրբեջանի պետական անվտանգության ծառայության նախաքննական մեկուսարանի պաշտոնյաները Վարդանյանին տեղափոխել են պատժախուց, որտեղ էլ նրան պահել են ողջ հացադուլի ժամանակ:

Մենախցում լույսը վառված է եղել շուրջօրյա, ինչն էլ հանգեցրել է անքնության եւ հյուծման: Բացի դրանից, նրան ստիպել են երկար ժամանակ ոտքի վրա կանգնած մնալ եւ ավելի քան երկու օր զրկել են խմելու ջրից: Ավելին, նրան թույլ չեն տվել լողանալ եւ փոխել հագուստը, չեն հատկացրել զուգարանի թուղթ, արգելել են գիրք կամ կարդալու որեւէ նյութ վերցնել, նա զրկված է եղել անկողնու սպիտակեղենից:

Հատկապես մտահոգիչ է այն փաստը, որ ո՛չ Վարդանյանի փաստաբանին, ո՛չ որեւէ մեկին, այդ թվում՝ տեղի Մարդու իրավունքների պաշտպանին, չեն թույլատրել հացադուլի ժամանակ այցելել Վարդանյանին, իսկ նրա շփումն արտաքին աշխարհի հետ (օրինակ՝ ընտանիքի հետ հեռախոսազանգերը) դադարեցվել է:

Այս վերաբերմունքով, որը նպատակաուղղված է եղել հացադուլի, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղում քաղաքական գործունեության եւ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի պաշտպանության համար Վարդանյանին պատժելուն, Ադրբեջանը կոպտորեն խախտում է Խոշտանգումների դեմ կոնվենցիայով իր ստանձնած պարտավորությունները, ինչպես նաեւ ՄԱԿ-ի՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ վերանայված կանոնները: Ցավոք, Ռուբեն Վարդանյանի նկատմամբ դաժան վերաբերմունքն ամենեւին էլ զարմանալի չէ. Ադրբեջանը հայտնի է եւ լավ փաստագրված պատմություն ունի թե՛ քաղբանտարկյալներին ընդհանրապես, թե՛ մասնավորապես էթնիկ հայ կալանավորներին խոշտանգելու հարցում: Հաշվի առնելով Ռուբեն Վարդանյանի ազգային պատկանելությունը, Լեռնային Ղարաբաղի կառավարությունում նրա՝ նախկին բարձրաստիճան պաշտոնյայի կարգավիճակը, Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի եւ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ վերաբերմունքի բացահայտ քննադատությունը, ինչպես նաեւ նրան կալանքի տակ պահելը Պետական անվտանգության ծառայության ներքո (որը տխրահռչակ համբավ ունի էթնիկ հայերի խոշտանգումների հարցում), Վարդանյանը գտնվում է հետագա խոշտանգումների եւ դաժան վերաբերմունքի վերահաս վտանգի տակ:

«Մենք ցնցված էինք՝ իմանալով, թե ինչ սարսափների միջով է անցել հայրս: Սարսափելի է անգամ մտածել, թե ինչ են անում Ադրբեջանում ոչ այդքան հայտնի բանտարկյալների նկատմամբ, որոնք նման միջազգային աջակցություն չեն ունեցել, ինչպես հայրս: Հանուն Ադրբեջանում պահվող բոլոր քաղբանտարկյալների՝ լինեն հայեր, ադրբեջանցիներ կամ որեւէ այլ ազգության ներկայացուցիչներ, նմանօրինակ անմարդկային վերաբերմունքը բանտարկյալների նկատմամբ պետք է դադարեցվի: Մենք կոչ ենք անում ՄԱԿ-ին՝ Ադրբեջանի կառավարությանը պատասխանատվության ենթարկել եւ օգնել պաշտպանելու հորս կյանքը»,-նշել է Ռուբեն Վարդանյանի ավագ որդին՝ Դավիթ Վարդանյանը:

Բազմաթիվ իրավապաշտպան կազմակերպություններ, ազգային կառավարություններ եւ միջազգային կառույցներ կոչ են արել Ադրբեջանին ազատ արձակել Ռուբեն Վարդանյանին եւ Լեռնային Ղարաբաղի մյուս քաղբանտարկյալներին: Օրինակ՝ 2024 թվականի հունիսի 11-ին, ամերիկացի Սենատոր Էդ Մարքին՝ Սենատի բարձր ամբիոնից, կոչ էր արել ազատ արձակել բանտարկյալներին, առանձնահատուկ կերպով նշելով եւ դատապարտելով Վարդանյանի նկատմամբ դաժան վերաբերմունքը:

ԾՐԱԳԻՐ

13 ԳԻՏՆԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԿԱՆՑՆԻ

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի հրամանով հաստատվել է 2023թ. նոյեմբերին կազմակերպված «Մասնագիտական վերապատրաստում 2024» մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ցանկը: Ֆինանսավորման է երաշխավորվել 13 ծրագիր:

Այսպիսով՝ Հայաստանի տարբեր գիտական կազմակերպությունների 13 երիտասարդ հետազոտող մասնագիտական վերապատրաստում կանցնի ԱՄՆ-ի, Կանադայի, Գերմանիայի, Չինաստանի եւ այլ երկրների առաջատար համալսարաններում ու գիտական կենտրոններում: Ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ցանկ ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի հրամաններով հաստատվել են ավելի վաղ կազմակերպված եւս երկու մրցույթների արդյունքները:

Մասնավորապես՝ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «Postdoc-Armenia 2024»» մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված հայտերի ցանկը : Այս մրցույթի շրջանակում ֆինանսավորման է երաշխավորվել 3 նախագիծ:

ԿԳՄՍ նախարարի մեկ այլ հրամանով հաստատվել է նաեւ «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում 2024» մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված հայտերի ցանկը: Այս դեպքում եւս ֆինանսավորման է երաշխավորվել 3 նախագիծ:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 1 մարդ զոհվել, 17-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

6 ԱՄՍՈՎ ԿԱՐԳԵԼՎԻ ՈՐՈՇ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

Կառավարությունն իր այսօրվա՝ հունիսի 13-ի նիստում Հայաստանից ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրներ մի շարք ապրանքների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին որոշում կայացրեց:

Ըստ այդմ, ժամանակավոր՝ 6 ամիս ժամկետով արգելք է սահմանվում մի շարք գյուղատնտեսական արտադրատեսակների, այդ թվում՝ ցորենի, մեսլինի, գարու, եգիպտացորենի, հնդկացորենի, արեւածաղկի սերմի, արեւածաղկի ձեթի արտահանման նկատմամբ:

Նշված ապրանքների մասով ներքին արտադրությունը չի բավարարում ՀՀ շուկայի պահանջարկը, ինչն ապահովվում է հիմնականում ներմուծման ծավալների հաշվին:

Որոշմամբ սահմանվող արգելքը չի տարածվելու ՀՀ ներմուծված եւ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված Հայաստանից արտահանվող ապրանքների վրա:

Նշենք, որ նման արգելք արդեն սահմանվել էր, որի գործողությունը կավարտվի 2024-ի հուլիսի 2-ին: Սույն որոշման նախագծով առաջարկվում է եւս 6 ամիս ժամկետով երկարաձգել արտահանման արգելքը:

Այս ապրանքների մասով բացակայում կամ աննշան է արտահանումը Հայաստանից երրորդ երկրներ եւ Որոշման ընդունումը էական ազդեցություն չի ունենա գյուղարտադրողների վրա:

Նախագծի ընդունմամբ զգայուն ապրանքների մասով կմոտարկվեն ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից միակողմանի կիրառվող արտահանման կարգավորման միջոցները, ինչը պահպանվող համաշխարհային հակաճգնաժամային իրավիճակի ներքո եւ պարենի միջազգային գների աճի պարագայում՝ կապահովի Եվրասիական տնտեսական միության միասնական շուկայի անխափան գործունեությունը:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ԲՐԻԿՍ-ԻՆ ՄԻԱՆԱԼ

ԲՐԻԿՍ-ի (ի սկզբանե ներառում էր Բրազիլիան, Ռուսաստանի Դաշնությունը, Հնդկաստանը, Չինաստանը եւ Հարավային Աֆրիկան) այս տարվա ընդլայնումից հետո եւս 29 պետություն ցանկանում է այս կամ այն ձեւով միանալ կազմակերպությանը:

Այդ երկրների թվում են, օրինակ, Ադրբեջանը եւ Թուրքիան:

Բացի այդ, առանձին նշված է Պաղեստինը, որը դեռ լիարժեք ճանաչում չունի միջազգային ասպարեզում: Կարեւոր է նշել, որ ոչ բոլորն են պաշտոնապես դիմել միանալու համար:

Ադրբեջանի մասով նշվում է, որ հանրապետության պաշտոնյաները չեն բարձրաձայնում ասոցիացիայի մասնակցության մակարդակի մասին, թեպետ, օրինակ, օրերս Կազանում մեկնարկած ԲՐԻԿՍ խաղերին ադրբեջանցի մարզիկները մասնակցում են:

ՎԻՐԱՎՈՐՆԵՐ

ՈՎՔԵՐ ԵՆ ՏՈՒԺԵԼ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԾ ՆՈՒՆԱԿՆԵՐԻՑ

Հունիսի 12-ին ՀՀ Ազգային ժողովի մոտ «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման կազմակերպած բողոքի ակցիայի դեմ ոստիկանության կիրառած հատուկ միջոցների արդյունքում, ի թիվս բազմաթիվ ցուցարարների, տուժել են նաեւ 10-ից ավելի լրագրողներ եւ օպերատորներ, որոնք իրադարձությունների կիզակետում կատարում էին իրենց մասնագիտական պարտականությունները:

Այսպես՝ լուսաձայնային նռնակների պայթյուններից եւ առաջացած հրմշտոցներից վնասվածքներ են ստացել «News.am» լրատվական կայքի օպերատոր Վազգեն Եթումյանը, «Armlur.am»-ի օպերատոր Հովսեփ Հովսեփյանը, «Սիվիլ-Նեթ»-ի օպերատոր Նարեկ Հայրյանը, «ABC media»-ի լրագրողներ Նանե Հայրապետյանն ու Աղվան Ասոյանը, օպերատորներ Էդիկ Մալաքյանն ու Արման Ղարիբյանը, «Mediahub.am»-ի թղթակից Նարե Գեւորգյանը, «AlphaNews»-ի լրագրող Արփինե Բաղդասարյանը եւ օպերատոր Հովհաննես Հակոբյանը:

Բախումների ընթացքում վնասվել կամ կորել է «Փաստինֆո» լրատվականի, PARA TV-ի, «Սպուտնիկ Արմենիա»-ի եւ այլ լրատվամիջոցների տեխնիկան՝ ուղիղ հեռարձակման սարքեր, տեսախցիկներ ու միկրոֆոններ:

Մենք՝ ներքոստորագրյալ լրագրողական կազմակերպություններս, խստորեն դատապարտում ենք ոստիկանության կողմից ՁԼՄ-ների ներկայացուցիչների նկատմամբ բիրտ ուժի կիրառումը, ոչ պրոֆեսիոնալ, չհաշվարկված գործողությունները, որոնք հանգեցրել են ծանր հետեւանքների: Մի շարք տեսագրություններում, ինչպես նաեւ «Ֆոտոլուր» լրատվական գործակալության լուսանկարում պարզորոշ երեւում է, որ լուսաձայնային նռնակներ ուղղվել են նաեւ լրագրողների ու օպերատորների կողմ, որտեղ կուտակված էին լրատվամիջոցների տեսախցիկները: Սա հիշեցնում է 2016 թվականի հուլիսին Երեւանի Սարի թաղում տեղի ունեցած իրադարձությունները լուսաբանող լրագրողների թիրախավորումը եւ նրանց նկատմամբ չարդարացված ուժի կիրառումն ու հետապնդումները, ինչը վկայում է, որ ոստիկանության գործելաոճում գրեթե ոչինչ չի փոխվել, եւ լուրջ կասկածի տակ է դնում հռչակված բարեփոխումների մասին պնդումները:

Այս ֆոնին խոր մտահոգություն է առաջացնում այն փաստը, որ երկրի առաջին դեմքերն անվերապահորեն արդարացրել են ուժային կառույցների գործողությունները՝ նույնիսկ չսպասելով դրանց վերլուծությունների արդյունքներին, ինչը պարարտ հող է ստեղծում հետագայում նման գործողությունների կրկնման համար:

Վրդովմունք է առաջացնում նաեւ այն, որ նույն օրը, երբ Ազգային ժողովի նիստում՝ վարչապետի հետ հարցուպատասխանի ժամանակ, վիճաբանություն է սկսվել իշխանության եւ ընդդիմության ներկայացուցիչների միջեւ, անվտանգության ծառայության աշխատակիցները փորձել են ԱԺ-ի օթյակից բռնի ուժով դուրս հանել լրագրողներին՝ արգելելով նրանց կատարել մասնագիտական պարտականությունները՝ տեսանկարահանել ԱԺ նիստերի դահլիճում տեղի ունեցողը: Այսպիսի անընդունելի գործելաոճ խորհրդարանում դրսեւորվել է նաեւ նախորդ տարիներին, եւ սա դարձել է արատավոր ավանդույթ:

Ելնելով վերոգրյալից՝ մենք պահանջում ենք.

. իշխող քաղաքական ուժից՝ հանդես գալ հայտարարությամբ եւ հայցել ներողամտություն հունիսի 12-ի իրադարձությունների ընթացքում տուժած բոլոր լրագրողներից ու լրատվամիջոցներից, փոխհատուցել նրանց վնասները եւ միջոցներ ձեռնարկել ճգնաժամային իրավիճակներում նրանց անվտանգ գործունեությունն ապահովելու համար,

. Ներքին գործերի նախարարությունից՝ ծառայողական քննություն իրականացնել եւ վերլուծել ոստիկանության գործողությունների օրինականությունն ու համաչափությունը, բացահայտել խախտումները, հրապարակայնորեն ընդունել դրանք եւ պատասխանատվության ենթարկել իրենց լիազորությունները չարաշահած ծառայողներին:

Մենք մեր համերաշխությունն ու սատարումն ենք հայտնում ցավալի իրադարձություններում տուժած բոլոր լրագրողներին ու օպերատորներին, մաղթում շուտափույթ ապաքինում եւ տոկունություն:

ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ

ԳՈՐԻՍԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

Freedom Broker Armenia

ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐ ԿՆՎԻՐԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ

Business YereFun նետվորքինգ միջոցառման գործընկերն է Freedom Broker Armenia-ն:

Միջոցառումն անցկացվելու է հունիսի 14-ին «Արարատ» գոլֆ ակումբում:

Business YereFun-ի ընթացքում իրենց ոլորտում հաջողած մասնագետները կներկայացնեն բիզնես տրանսֆորմացիայի ամենահիշարժան քեյսերը՝ անդրադառնալով բիզնեսի հիմնական այս գործառույթներին՝ օպերացիոն մենեջմենթ, մարքեթինգ, ֆինանսներ, մարդկային ռեսուրսներ, վաճառք:

Միջոցառմանը կմասնակցեն բիզնեսների սեփականատեր, հիմնադիրներ, տնօրեններ եւ թոփ մենեջերներ:

Միջոցառման ընթացքում անցկացվելու է գոլֆի մրցաշար, որի 3 հաղթողներին Freedom Broker Armenia-ը կնվիրի հայտնի կազմակերպությունների բաժնետոմսեր:

Բացի այդ, միջոցառման շրջանակներում եւս մի քանի մասնակից բաժնետոմսեր ստանալու հնարավորություն կունենա, որի մասին կհայտարարվի հենց տեղում:

«Ուրախ ենք մասնակցելու այս կարեւոր միջոցառմանը, որն իր բնույթով եզակի է թե՛ բովանդակության եւ նետվորքինգի տեսանկյունից: Վստահ ենք, որ մասնակիցները իրադարձության շրջանակում կստանան ոչ միայն կարեւոր գիտելիքներ, այլեւ ձեռք կբերեն կապեր տարբեր ասպարեզներից: Որպես ընկերություն, որն ապահովում է մուտք միջազգային շուկաներ՝ ուրախ ենք, որ մրցույթի հաղթողներին հնարավորություն ենք ընձեռելու բացահայտել ներդրումների աշխարհը»,- նշում են Freedom Broker Armenia-ից:

Նշենք, որ Business YereFun նետվորքինգ միջոցառումը կազմակերպել է LinkedIn Local Yerevan-ը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԵԿՆԱՐԿ

ԲԱԿՈՒՆՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ԳՈՐԻՍՈՒՄ

Գորիսում երեկ տվել է մեծանուն գրող, գրականագետ Ակսել Բակունցի ծննդյան 125-ամյակի միջոցառումների մեկնարկը:



Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի «Ակսել Բակունցի տուն-թանգարան» մասնաճյուղում կազմակերպված միջոցառումներին ներկա են եղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, գրականության եւ արվեստի ոլորտի ներկայացուցիչներ, հյուրեր, դպրոցականներ:

ԿԳՄՍ նախարարը, ողջունելով ներկաներին, շնորհավորել է հոբելյանի կապակցությամբ եւ ընդգծել՝ Բակունցի ծննդյան օրը, իսկապես, համաքաղաքային տոնի է վերածվում, իսկ այդ պատվին քիչ գրողներ են արժանանում. «Սա խոսում է Բակունցի թողած արժեքների, գրական ժառանգության եւ ստեղծագործությունների արդիականության մասին. դրանք ապրում են եւ մի մասն են մեր իրականության եւ կյանքի: Սա, թերեւս, ամենակարեւորն է, որով մենք կարող ենք արժեւորել եւ շարունակել այն կարեւոր ուղին, որը սկսել էր եւ, ցավոք, վաղ տարիքում կիսատ մնաց Բակունցի համար: Անձամբ ինձ համար Ակսել Բակունցն իր առանձնահատուկ տեղն ունի հայ գրողների շարքում: Դեռ դպրոցական տարիներից նա իմ ամենասիրելի գրողներից է: Այն նրբությունն ու նրբանկատությունը, որով տեքստը, կարծես, դառնում է երաժշտություն, յուրաքանչյուրիս սովորելու եւ մտածելու տեղ է տալիս»,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

Դիմելով միջոցառմանը ներկա դպրոցականներին՝ ԿԳՄՍ նախարարն ընդգծել է՝ առաջին հերթին դպրոցում պետք է ամենայն խորությամբ եւ մանրամասնությամբ ուսումնասիրել մեր կարեւոր հեղինակներին, որոնցից մեկն էլ Բակունցն է:

Գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, արժեւորելով Բակունցի արվեստը եւ գրական ժառանգությունը, շեշտել է՝նա նոր գույն է բերել հայկական արձակին, եւ դպրոցականներն անպայման պետք է շատ կարդան Բակունց. «Բակունցի լեզուն եւ պատմելու ոճը երեւակայական աշխարհներ են բացում. ես ինքս դեռ պատանի տարիքից եղել եմ Մթնաձորում, նրա նկարագրած անտառում եւ դաշտում:

Բակունցն ինքը բնության մի կտոր է: Նրա ոսկեղենիկ հայերենի լեզվի ուժը մեզ անհրաժեշտ է, քանզի գեղեցիկ լեզուն նաեւ սիրո եւ միմյանց հարգելու հարաբերությունների ստեղծման ամուր հիմքն է»:

Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն Սյուզաննա Խոջամիրյանը եւս ողջունել է ներկաներին եւ նշել՝արդեն ավելի քան մեկ դար Գորիս ասելիս պատկերացնում ենք Բակունցին, իսկ Բակունցի անունը լսելիս մեր աչքի առաջ հառնում է Կյորեսը՝իր չքնաղ գույներով եւ արեւին ձգտող բնակիչներով:

«Այստեղ՝ Գորիսում, ծիրանափողը դեռ հնչում է, Միրոն պատմություններ է պատմում, իսկ ալպիական մանուշակը բուրում է: Կարծում եմ, որ հենց այստեղ բոլորս մտովի խոստանալու ենք ինքներս մեզ՝ ի հիշատակ Բակունցի սիրել, պահպանել եւ փայփայել այս հողը»,- նշել է Սյուզաննա Խոջամիրյանը:

Այցի շրջանակում ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը «Ակսել Բակունցի տուն-թանգարան» մասնաճյուղի վարիչ Վարդան Սարգսյանի ուղեկցությամբ շրջել է թանգարանում, ծանոթացել ցուցանմուշներին, ինչպես նաեւ թանգարանի ենթակառուցվածքային պայմաններին: Վարդան Սարգսյանի խոսքով՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ փորձում են ավելի մեծ թվով դպրոցականների եւ այլ այցելուների ներգրավել՝ ներկայացնելով Բակունցի գրական ժառանգությունն ու ապրած կարճ, սակայն բովանդակալից ու ողբերգական կյանքը:

Քննարկվել են նաեւ թանգարանի այգում մոդուլային սրահի կառուցման մանրամասները, որի աշխատանքներն արդեն մեկնարկել են: Սա հնարավորություն կտա միջոցառումները պատշաճ կազմակերպել ոչ միայն ամռանը՝ բակում, այլեւ ամբողջ տարվա ընթացքում՝ անկախ եղանակային պայմաններից:

Հոբելյանական օրվա շրջանակում թատերական ներկայացումներով հանդես են եկել Գորիսի Վ. Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանները, տեղի է ունեցել համերգային ծրագիր, հանդիպում հրապարակախոս Հակոբ Այնթապյանի հետ, ինչպես նաեւ կայացել են ARLOOPA հավելվածով Ասլամազյանի «Բակունցի եւ մոր դիմանկարի» անիմացիայի եւ «Սյունյաց երկիր» թերթի՝ Ակսել Բակունցին նվիրված հատուկ համարի շնորհանդեսները: Միջոցառումներն ուղեկցվել են հյուրերի հետ զրույց-քննարկումներով, երեխաների համար խեցեգործության, նկարչության վարպետության դասերով:

ԿԳՄՍՆ

ՔՆՆԱՐԿԵԼ Է ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ԿԳՄՍ նախարարը ««Զորաց քարեր» բնակատեղի» արգելոցում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն այցելել է ««Զորաց քարեր» բնակատեղի» պատմամշակութային արգելոց: Նրան ուղեկցել են նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը եւ Մշակութային ժառանգության վարչության պետ Աստղիկ Մարաբյանը:

Արգելոցի տնօրեն Արամ Դավթյանի եւ աշխատակիցների հետ քննարկվել են հայեցակարգային զարգացման որոշ խնդիրները, մասնավորապես՝ նախատեսվող մոդուլային կենտրոնի կառուցման, տարածքի հետ կապված որոշ փաստաթղթային եւ տեխնիկական հարցերի վերաբերյալ, ինչպես նաեւ առաջիկա անելիքները:

Նախարարը հետաքրքրվել է, թե կառուցվելիք մոդուլային կենտրոնում ինչ գործընթացներ են կազմակերպվելու, եւ որքանով այն կնպաստի արգելոցի հիմնական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

ԿԳՄՍ նախարարն այցի շրջանակում նաեւ ծանոթացել է տարածքում առկա ենթակառուցվածքներին եւ պայմաններին, շրջել արգելոցի տարածքում:

Տնօրեն Արմեն Դավթյանը նախարարին ներկայացրել է հիմնական խնդիրները՝ կարեւորելով այցելուների թվի ավելացումը, հանրահռչակումն ու զարգացումը:

Ժաննա Անդրեասյանի հանձնարարությամբ համայնքի հետ կքննարկվեն արգելոցի տարածքում շինթույլտվության փաստաթղթային հարցերը՝ նախատեսվող աշխատանքները հնարավորինս սեղմ ժամկետներում կազմակերպելու նպատակով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿԱՐՎԱԽԱԼԸ՝ ՄԲԱՊԵԻ ՄԱՍԻՆ

Մադրիդի «Ռեալի» պաշտպան Դանի Կարվախալը խոսել է ակումբի նորեկ Կիլիան Մբապեի մասին:

«Նա աշխարհի լավագույն ֆուտբոլիստն է, իսկ լավագույնները պետք է խաղան լավագույն ակումբում: Հավաքականում հուսով ենք, որ նա Եվրոպայի առաջնությանը այնքան էլ լավ չի մասնակցի, բայց օգոստոսին կրկին կվերադառնա իր լավ մարզավիճակին:

Մբապեի դեմ խաղալով՝ ես բազմիցս խնդիրներ եմ ունեցել: Նա ամենաուժեղ մրցակիցներից էր արագության եւ տեխնիկայի տեսանկյունից:

Անկեղծ լինենք՝ Մբապեն «Ռեալին» անպարտելի չի դարձնելու: Ֆուտբոլը մաթեմատիկա չէ: Այստեղ միայն աստղային խաղացողներով հարց չես լուծի: Հաղթելու, գավաթներ նվաճելու համար պետք է ստեղծել թիմ եւ համոզվել, որ բոլորը գնում են նույն ուղղությամբ»,- Կարվախալին մեջբերում է RMC Sport-ը:

Օրեր առաջ «Ռեալը» պաշտոնապես հայտարարեց, որ ազատ գործակալի կարգավիճակում 5 տարվա պայմանագիր է կնքել Փարիզի ՊՍԺ-ի հարձակվող Կիլիան Մբապեի հետ:

«ՆՈԱ»-Ն ՆՈՐ ՄԱՐԶԻՉ ՈՒՆԻ

Երեւանի «Նոա» ֆուտբոլային ակումբը նոր գլխավոր մարզիչ ունի:

Այս մասին հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը: Պորտուգալացի մարզիչ Ռուի Մոտան նշանակվել է «Նոա» ՖԱ-ի գլխավոր մարզիչ: 45-ամյա մասնագետը 2024 թվականի հունվարին գլխավորեց վրացական «Դիլա» ակումբը եւ դուրս բերեց թիմին մրցաշարային աղյուսակի առաջին հորիզոնական:

Մինչեւ «Դիլա» ակումբը գլխավորելը, Մոտան աշխատել է նաեւ պորտուգալացի Ռիկարդո Սա Պինտոյի մարզչական շտաբում եւ աշխատել է այնպիսի ակումբներում, ինչպիսիք են իրանական «Էսթեղլալ»-ը, պորտուգալական «Մորեյրենսե»-ն, բրազիլական «Վասկո դա Գամա»-ն, պորտուգալական «Բրագա»-ն, բելգիական «Ստանդարտ»-ը, լեհական «Լեգիա»-ն եւ այլն:

«Շատ ուրախ եմ այս մեծագույն ակումբին միանալու համար: Մեծ ոգեւորվածությամբ եմ գալիս, որպեսզի միասին պատմություն կերտենք: Մենք ամեն օր քրտնաջան աշխատելու ենք, որ հասնենք մեր նպատակներին: Միասին մենք ավելի ուժեղ ենք լինելու»,-ասել է Մոտան:

ՄԵՍՍԻՆ ԲԱՑԱՌԵԼ Է ՄԱՐԶՉԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔԸ

Լիոնել Մեսսին նշել է, որ մեծ հավանականությամբ կարիերան ավարտելու է ամերիկան «Ինտեր Մայամիում»:

38-ամյա ֆուտբոլիստը նշել է, որ մտադիր չէ մարզչական աշխատանքի անցնել կարիերան ավարտելուց հետո:

«Ես միշտ ասել ում, որ չեմ ցանկանում դառնալ մարզիչ: Դա դուր չի գալիս ինձ»,- ասել է արգենտինացին:

● *Հունիսի 15-ին՝ժամը 19:30-ին, Համազգային պետական թատրոնում տեղի կունենա Օ. Հենրիի «...Եվ նորից գարուն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3.500 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ընդգրկվել որակավորված ներքին աուդիտորների ցանկում:

Հարութ Ստեփանյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկվելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն կարող են դիմում ներկայացնել այն անձինք, որոնք ունեն Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի միջազգայնորեն ճանաչված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) ներքին աուդիտորների միջազգային ինստիտուտի կողմից իր կրթական ստանդարտներին համապատասխան անցկացված քննությունների արդյունքում տրված ներքին աուդիտորի որակավորումը (Certified Internal Audit- CIA) կամ հանրային հատվածի աուդիտորի որակավորումը (Certified Government Auditing Professional - CGAP),

2) որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (ACCA) կողմից անցկացված առնվազն բազային (ֆունդամենտալ) 9 քննության (F1-F9) արդյունքում տրված հաշվապահ-աուդիտորի որակավորումը,

3) հանրային ֆինանսների եւ հաշվապահության արտոնագրված ինստիտուտի (Chartered Institute of Public Finance Accountancy: CIPFA) կողմից տրված որակավորումը,

4) որակավորված հանրային հաշվապահների ամերիկյան ինստիտուտի (American Institute of Certified Public Accountants) կողմից տրված հանրային հաշվապահի որակավորումը (CPA):

Հայաստանի Հանրապետությունում ներքին աուդիտի ոլորտում ընդունելի այլ կառույցների կողմից տրված հետեւյալ որակավորումներից առնվազն մեկը՝

1) «Աուդիտորական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն տրված աուդիտորի որակավորումը,

2) Հայաստանի Հանրապետության հաշվապահների եւ աուդիտորների ասոցիացիայի (ՀՀԱԱ) կողմից տրված աուդիտորի որակավորումը:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ դիմումին կից պետք է ներկայացնել՝

- անձնագրի պատճենը,
- համապատասխան որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը,
- հայտարարություն:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ի՞նչ է Կենտրոնական բանկի անկախությունը, եւ ինչպե՞ս է այն չափվում:

Աշոտ Գեւորգյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Գների կայունության ապահովման համար ինստիտուցիոնալ կարեւոր նախապայման է ԿԲ-ների անկախությունը: Ուսումնասիրությունները վկայում են, որ ԿԲ-ների անկախությունը (գործառնական) նպաստում է իրականացվող դրամավարկային քաղաքականության վարկունակությանը՝ մեծացնելով շուկայի արձագանքը ԿԲ ազդակներին: Էմպիրիկ վերլուծությունները բացահայտել են ԿԲ-ի անկախության եւ ցածր գնաճի միջեւ ուղղակի կապ:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դրամավարկային քաղաքականության իրականացման առումով տարբերակում են ԿԲ-ի անկախության երեք աստիճան՝

- նպատակի սահմանման,
- նպատակային ցուցանիշի սահմանման,
- գործառնական:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Քաղաքացիները շարունակում են իրերը կոչել իրենց անուններով: Երեկվանից քաղաքի տարբեր հատվածներում, աղբամանների վրա, ակնառու վայրերում նրանք ամրացրել են այս նկարները՝ այդպիսով արտահայտելով իրեն բողոքը: Նկարների «վերնագիրն» է՝ «Թուրք-ադրբեջանական տանդեմին 30 արծաթով վաճառվածները»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 8 + 10 +22 + 26
Կոտայքի լեռներ	+ 8 + 12 +21 + 24
Կոտայքի նախալեռներ	+ 15+ 17 +28 + 30
Գեղարքունիք	+ 10+ 13 +21 + 24
Լոռի	+ 9 + 13 +24 + 27
Տավուշ	+ 15+ 17 +28 + 31
Արագածոտնի լեռներ	+ 9 + 13 +21 + 24
Արագածոտնի նախալեռներ	+ 15+ 18 +28 + 31

Արարատ	+ 16 + 18 +31 + 33
Արմավիր	+ 16+ 18 +31 + 33
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 16 + 18 +31 + 33
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 +29 + 32
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 28
ԼՂՀ	+ 13 + 14 +25 + 26
Երեւան	+ 19 + 21 + 23 + 25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 14.6.2024
Հասցեն՝ Գերաբերունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*